ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXVI, № 1, 1973

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԱՂՆԻՎ ՊԵՏՐՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Մեծդյան 70-ամյակի առթիվ)

Աղնիվ Պետրոսյանը ծնվել է 1903 թվականին Վանում, արհեստավորի ընտանիքում. մանկությունը անց է կացրել սուլթանական ռեժիմի պայմաններում, 6 տարեկան հասակում հորից որբացել, 12 տարեկանում թուրքական յաթաղանից ճողոպրած դարձել է գաղթական և միաժամանակ մորից որբացած։ Այնուհետև մինչև 1921 թ. ապրել է որբանոցներում։ 1921—1925 թվականներին Սովետական Հայաստանի անդրանիկ բարձրագույն դպրոցի՝ Երևանի պետական համալսարանի ուսանող և նրա անդրանիկ շրջանավարտը 1925 թվականին։

Աշխատանքի է անցել 1921 թվականին, նախ որպես դրասենյակային աշխատող, 1923 թվականից գիտական հիմնարկում լաբորանտի, ասիստենտի, կրտսեր ապա ավագ գիտաշխատողի պաշտոններով։ 1940 թվականին գիտությունների թեկնածու, 1957 թվականից գիտության դոկտոր, Լենինի շքանշանակիր (1955 թ.), Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, ՍՄԿ կուսակցության անդամ (1942 թ.), բյուրեղային մարբության աղնվագույն հասարակական գործիչ։

Դեռևս 2-րդ կուրսի ուսանողուհի Ա. Պետրոսյանն իր ընդունակություններով և աշխատասիրությամբ գրավեց պրոֆ. Պ. Բ. Քալանթարյանի ուշադրությունը։ Մեր հողն ու ջուրը լավ իմացող Քալանթարյանը գիտակցում էր, որ սակավահող Հայաստանում պետք էր բարձրացնել հողի արգավանդությունը և բերքատվությունը։ Հողի բերրիության բարձրացման համար անհրաժեշտ էր

ներթափանցել մեր հողերի քիմիական բաղադրության և նրանցում կատարվող կենսաբանական պրոցեսների մեջ (հիմնել ագրոքիմիական և հողի մանրէակենսաբանությունը), որպեսզի կարելի լիներ ղեկավարել հողի բերրիության այդ կարևորագույն լծակները։ Բազմավաստակ գիտնականը ուրիշների թվում ընտրեց նաև Ա. Պետրոսյանին։ Աշակերտելով Քալանթարյանին Պետրոսյանը դարձավ իր ուսուցչի լավագույն փոխարինողներից, գիտական ժառանգորդներից, մինչև կյանքի վերջը նրա երախտապարտ աշակերտներից մեկը։ Եթե պրոֆ. Պ. Բ. Քալանթարյանը եղել է Հայաստանում ագրոքիմիական գիտության և հողի մանրէակենսաբանության հիմնադիրը, ապա այդ հիմքի անկյունաքարերից և ամբողջական շենքի հիմնական սյուներից մեկն է եղել Ա. Պետրոսյանը։

Ա. Պետրոսյանի գիտական գործունեության ուղղությունը շատ ճիշտ և մտածված է ընտրվել։ Դեռևս 1920-ական թվականներին գյուղֆակի ուսանողների մասնակցությամբ պրոֆ. Քալանթարյանը կազմակերպեց առաջին պարարտացման դաշտային փորձերը հանքային և տեղական պարարտանյութերի հետ. նորաստեղծ Կենտրոնական քիմիական լաբորատորիայում պրոֆ. Ստ. Պ. Ղամբարյանի ցուցումներով Ա. Պետրոսյանը հողվածագրիս հետ տիրապետեց և կատարեց հողերի և մի շարք բույսերի ագրոքիմիական առաջին անալիզները։ Կեյլդալի մեթոդով ազոտի որոշման աշխատանքները կատարվում էին նավթայրիչի և Ագնիվի եղբոր՝ Արծրունու ինքնաշեն «չիժիկների» վրա։ Այդ փորձերից և անալիզներից պարզվեց, որ Հայաստանի երկրագործական շրջանների հողերում բերքատվության գործոններից նվազագույնը ազոտն է։ Պահանջվում էր հարստացնել մեր հողերը ազոտով։

Այդ պրոբլեմը լուծելու համար Քալանթարյանը աշխատանքները կազմակերպեց երեք ուղղությամբ. նախ՝ պահանջվեց առավելագույն չափով կուտակել, ճիշտ պահպանել և կիրառել տեղական-օրգանական պարարտանյութերը։ Երկրորդ՝ հանրապետությունում հիմնել առաջին հերթին ազոտական, ապա նաև ֆոսֆորական պարարտանյութերի արտադրությունը, որը կենսագործվեց Կիրովականում և Ալավերդիում և վերջապես երրորդը՝ ուժեղացնել մեր հողերում օդի ազոտի կենսաբանական ֆիքսացիան՝ պալարաբակտերիաների և ազոտաբակտերի գործունեությունը։ Քալանթարյանը այդ աշխատանքները բաժանեց իր աշակերտների մեջ. դրանցից Ա. Պետրոսյանին և նրա ղեկավարությամբ գործող խմբին հանձնարարվեց ուսումնասիրել Հայաստանում մշակվող թիթեռնածաղկավորների պալարաբակտերիաների վիրուլենտությունը և ակտիվությունը, ազոտ ֆիքսելու ունակությունը, առանձնացնել և բազմացնել նրանց առավել ակտիվ ցեղերը։ Ավելի քան 30 տարիների ընթացքում Պետրոսյանի աշխատանքը փայլուն կերպով լուծեց այդ հարցը, նրա մեկուսացրած պալարաբակտերիաների էկոլոգիական տիպերը ճանաչվեցին որպես ամենաակտիվները։ Դրանց հիման վրա 30-ական թվականներին գյուղինստիտուտի բակում տնայնագործական ճանապարհով արտադրվեցին մի քանի տասնյակ հազար հեկտարաբաժին նիտրագին՝ կորնգանի, առվույտի, երեքնուկի, սիսեռի, լոբու և այլ կուլտուրաների համար։ Նիտրագինի փորձարկումները արտադրության մեջ տվեցին փայլուն արդյունք։ Այդ տվյալների հիման վրա հիմնավորվեց և ստեղծվեց Երևանի բակտերիական պարարտանյութերի գործարանը, Սովետական Միության մեջ առաջնեկներից մեկը։ Ագնիվ Պետրոսյանը մինչև իր կյանքի վերջը եղավ այդ գործարանի գիտական խորհրդատուն։

Ա. Պետրոսյանի դոկտորական դիսերտացիան «Հայկական ՍՍՀ-ի պալարաբակտերիաների էկոլոգիական առանձնահատկությունները» թեմայով, փայլուն պաշտպանեց և ստացավ լավագույն գնահատականը (1957 թ.)։ Այդ դիսերտացիայի նյութը հետագայում (1959 թ.) լույս տեսավ որպես մենագրություն՝ ՍՍԳԱ թղթակից անդամ պրոֆեսոր Ն. Ա. Կրասիլնիկովի խմբագրությամբ։ Մենագրությունը նվիրված է հեղինակի ուսուցչի, պրոֆեսոր Պ. Բ. Քալանթարյանի պայծառ հիշատակին։

Մեծագույն բարեխղճությամբ և զարմանալի խորությամբ է կատարել իր հետազոտությունները մանրէաբան գիտնականը։

Մենագրության 60-րդ էջում կարդում ենք «նույն թիթեռնածաղկավոր բույսի տարբեր սորտերը միատեսակ ուժգնությամբ չեն վարակվում պալարաբակտերիաների նույն շտամներով... միևնույն սորտից անջատած պալարաբակտերիաները իր իսկ սորտի համար առավել վիրուլենտ են, քան ուրիշ սորտերի համար»։ Գիտնականը ուսումնասիրել է նաև պալարաբակտերիաների էկոտիպերի ներտեսակային և միջտեսակային փոխհարաբերությունները, ինչպես նաև թիթեռնածաղկավոր բույսերի զարգացման ֆազերի և հասակի ազդեցությունները պալարաբակտերիաների ակտիվության վրա։

Պետրոսյանն իր շրջագայությունների ընթացքում նաև ստուգում էր նիտրագինի կիրառման արդյունավետությունը։ Պետք էր տեսնել թե ինչպես էր հուզվում, երբ մի շարք տեղերում ճիշտ չէին պահպանում նիտրագինի, այդ «կապրիզավոր» էակներ պարունակող պարարտանյութի կիրառման պայմանները։

Պետրոսյանը ամենաակտիվ մասնակցություն է ունեցել միութենական, ռեգիոնալ, հանրապետական գիտական նստաշրջաններին, բազմիցս հանդես է եկել հանրապետության շրջաններում ու գյուղերում, մամուլում ու ռադիոյով իր մասնագիտությանը առնչվող գործնական-կիրառական զեկուցումներով, զրույցներով։

Շնորհիվ Ա. Պետրոսյանի բեղմնավոր գիտական գործունեությանը Հայաստանը ճանաչվեց որպես պալարաբակտերիաների կենսաբանական գիտության կենտրոնը Միության մեջ։

Փոքր չեն նաև Պետրոսյանի ծառայությունները մանկավարժության և փոխարինող գիտական կադրեր պատրաստելու բնագավառում։ Քսան տարի (1932—1952) նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում իր սիրած առարկան, ղեկավարել է ասպիրանտների, որոնք հաջողությամբ պաշտպանել են դիսերտացիաներ։ Ա. Պետրոսյանը ԳԱ կենսաբանական բաժանմունքի գիտական խորհրդի ամենաակտիվ անդամներից մեկն էր։ Նա պաշտոնական կամ անպաշտոն մշտական խորհրդատու էր բոլոր նրանց, ովքեր դիմում էին նրան ամենատարբեր հարցերով։

Ավելի քան 60 գիտական աշխատությունների հեղինակ Ազնիվ Պետրոսյանը միկրոբիոլոգ էր, բայց ցուցաբերեց իր մակրոգիտնական և Մեծ մարդ լինելը։ Ագրոքիմիկոս և միկրոբիոլոգ Պ. Բ. Քալանթարյանի հիմնած գյուղատնտեսության միկրոբիոլոգիական գիտության ճյուղը, որին իր ամբողջ փայլուն կյանքը մինչև վերջը տվեց Ազնիվ Պետրոսյանը, պետք է զարգացնել ԳԱ միկրոբիոլոգիական ինստիտուտում և դա կլինի ամենալավ հուշարձանը այդ համեստ բայց մեծ մարդ-գիտնականի փայլուն հիշատակին։

Ե. Մ. ՄՈՎՍԵՍՅԱՆ